

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԶԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՅԻ ԽՆԴԻՐԸ ՊԵՐՍԿԱՎԱՆՈՒՄ

Մի քանի դարիներից ի վեր Պարսկահայերի մէջ միոք է յշացել Պարսկաստանի հողի փրայ մի միջնակարգ դպրոց հիմնելու; Եւ ոչ միայն միոքն է յշացել, այլ և խօսքից գործին անցնելու միերկու թէև դեռ ևս թոյլ արգայացաւթիւններ են եղել դրամական ֆոնդ կազմելու համար; Բայց և այնպէս խնդիրը դեռ ևս միայն յելլեղման շրջանի մէջ է, թէ Թաւրիզի հայոց առաջնորդարանում, թէ պարսկահայոց և թէ Կովկասեան մամուլի մէջ; Պիտի խոսովաննք որ մամուլի մէջ երեցած կարծիքների փոխանակութիւններին թէև հետեւած ենք, բայց նոցա մէջ չենք գրած իսկական հանդամանքների բացարութիւնը:

Պարզը առայժմ այս է որ գոյութիւն ունեցող սկզբնական դպրոցները թէև համարում են անհրաժեշտ, բայց նոքա դեռ ևս բաւարութիւն չեն դալիս զգացող աւելի բարձր պահանջներին; Պէսք է զգացում սկզբնականից աւելի բարձր դպրոցի:

Բայց սկզբնական դպրոցից վեր կան բազմազան Փիզի դըպրոցներ — հանրակրթական միջնակարգ դպրոցներ և արհեստագիրական դպրոցներ; Վճիռը յօգութ այս կամ այն դպրոցի կախւած է երեք դեսակ պայմաններից. 1) նիւթական միջոցներից և 2) նպատակայարմարութիւնից ընդհանուր ժողովրդի կարիքների համար:

Մեզ այնպէս է թւում թէ Պարսկաստանում ներկայումս բաւականաշափ պարբառագի հող չկայ մի միջնակարգ դպրոցի համար; Կովկասեան թեմական դպրոցների փորձը ցոյց է գրած, որ որքան և իցէ բաւարար չափով մի միջնակարգ դպրոց պահելը արժենում է պարեկան շուրջ 40 հազար ռուբլի, որ ասել է թէ մօտ մի մի-

լիոն ոռւբլի դրամագլուխու Սռանց այդ ապահովութեան - միջնակարգ դպրոցի կանոնաւոր ընթացքը անհնարին է: Իսկ Պարսկասպանում կազմել մի միլիոն ռուբլու դրամագլուխու, այդ այնքան անհաւանական է, որ հեշտութեամբ կարող ենք անկարելիութեան դեղընդունելու Որպէս զի Թիֆլիսում Ներսիսեան դպրոցի համար մի միլիոնի դրամագլուխ կազմէլը, դորա համար հարկաւոր է եղել մի Ներսէս Աշխարակեցու ամբողջ հեղինակութիւնն ու անձնական ջանքերը Թիֆլիսի պէս մի դեղում, ուր ներկայ դարումս կենդրոնացած են եղել թէ հայոց հարագութիւնը և թէ կրթւած դասակարգը, և բացառիկ կարգադրութիւններ մի համեմագապէս հարուստ թեմի ալբիւրների համար յօդուք լիշեալ դպրոցի, և վերջապէս հողերի ու շինութիւնների վարձագնի բարձրանալը՝ համեմագ Թիֆլիսի ընդհանուր յառաջդիմութեան, ընթացս մի քանի դասնեակ դարիների: Երբէք չենք կարող հաւափալ թէ մի Թաւրիզ կարող լինի դլուխ բերել այն, ինչ Թիֆլիսը հազիւ է դլուխ բերել այսքան ձիգ դարիներում: Իսկ եթէ Արքապարականի դպրոցը այն է դալու, ինչ ցայժմ ընծայել են մի Երևանի կամ նոյն իսկ նուշւայ դպրոցները, — ապա շնորհակալ ենք:

Դրամական խնդիրը մի միջնակարգ դպրոցի համար մենք ամենքանից առաջ քննացինք միմիայն այն պարզառով որ մեր արած դիպոլութիւնը կտրական է և բացասող ամեն առարկութիւն: Բայց միմիայն դրամականը չէ որ պիտի պայմանաւորէր Արքապարականի համար մի բարձր դպրոցի դիպարը որոշելիս: Աւզում ենք ասել որ նոյն իսկ եթէ կարելի լինէր մի միլիոն ռուբլի դրամագլուխ սպեշել — մենք խորհուրդ կ'առաջինք այն գործադրել ոչ մեզնում գոյութիւն ունեցող դպրոցների նման միջնակարգ դպրոց հիմնելու համար Արքապարականում:

Ի՞նչ է Պարսկահայ ժողովուրդը: Մի քանի դասնեակ հազար հոգու ազգաբնակութիւն, բաժանւած երկու իրարից կափարելապէս անջար ու շաբ հեռու թեմերի: Արքապարականի, որի մէջն է Թաւրիզը, և Իսպահանի կամ Նորջուղայի, որի մէջն է և Թեհրանը: Բայց բառիս բուն իմաստով հայ ժողովուրդ, ազգի մի իսկական հարած, Հայաստանի պատմական հողի վրաց նախած հայ ժողովուրդ, ներկայացնում է միմիայն Արքապարականը. իսկ Իսպահանի թեմի

հայութիւնը, սակաւաթիւ լինելուց դար, գաղթական բեկորներ է ներկայացնում: Պարսկաստանի հայութեան համար որ և է կենտրոնական դպրոց միտք կ'ունենար ուրեմն միայն Ասրագարականի հռչի վրայ:

Դէս հիմա տեսնենք թէ ինչ է Ասրագարականի հայութիւնը. Դա թաւրիզն է իւր 3 մօրակայ գիւղերով, Մաքուն 3 գիւղերով, Խոյը 7 գիւղերով, Սալմասպ գաւառն է 30 գիւղերով, Ուրմի քաղաքը 27 գիւղերով, Բարանդուղ գաւառամասը 10 գիւղերով, Օռուլուզը 9 գիւղերով, Սովուճ Բուլալը 4, Միանդուար և գիւղերը 4, Մարաշան և մօրակայ 2 գիւղը և վերջապէս Ղարադաղը իւր գաւառաներով՝ Գիզմար, Մէշափարա, Մնձվան և Քէզվան—իրենց 27 հայաբնակ գիւղերով:

Գալով ազգաբնակութեան, Թաւրիզի շրջանում հայերի թիւը պիտի ընդունել շուրջ 3.800, Մաքւայ շրջանում՝ 1.200, Խոյի շրջանում 1.800, Սալմասպի շրջանում 9.400, Ուրմիոյ շրջանում 4.300, Բարանդուղի՝ 1.200, Օռուլուզի՝ 700, Սովուճ-Բուլալինը՝ 300, Միանդուարինը՝ 300, Մարաշալինը՝ 900 և Ղարադաղի շրջանում 5.800 հայ, արականն ու իգականը միասին:

Ամբողջ Ասրագարականի հայոց թիւն է, հաշւած նաև մի կէս հազար հոգի Արդարիլում և այլ, վերը չըցիշւած գեղերում, ընդամենը 30.392 ըստ վիճակագրութեան Ասրագարականի հայոց առաջնորդի, 1898 թւականից:

Որպէս տեսնում է ընթերցողը, Ասրագարականի հայոց ընդարձակ բարածութեան վրայ հայ ժողովրդի թիւը այնքան է, որքան Թիֆլիս քաղաքի հայութեան հազիւ կէսը: Խղճուկ բան է, այնպէս չէ: Հարկաւ, բարեբախտութիւն է որ այդքան քիչ ժողովուրդ կուրակւած չէ մի քաղաքի մէջ, այլ ընդարձակ գեղ է բռնում, ցրւած լինելով 132 գեղերում: Հէնց այդ հանգամանքն է որ Արցապագականի հայութիւնը, իւր այնքան չնչին թւով, որքան և իցէ քաղաքական կարեորութիւն է ներկայացնում, մինչդեռ եթէ մի գեղ կուրակւած լինէր—նա ամեն քաղաքական կարեորութիւնից զուրկ կը լինէր:

Բայց ֆաքտը մնում է Փաքու: Մի միջնակարգ դպրոց (6-7 հիմնական դասարաններով, և 2-3 նախադպրաստականներով), իւր գոյու-

թիւնը արդարացնելու համար, սովորական պայմաններում, պէտք է ունենայ գոնէ շուրջ 500 աշակերդ: Խոկ ամբողջ Ասրագարականում չկայ մի կենտրոն, ուր հայութիւնը ներկայացնում լինի գեթ այնքան ժողովուրդ, որը կարողանայ միմիայն ինքը ապահովել ցիշեալ թւի  $\frac{2}{3}$ -ականը, որպէս զի միւս երրորդի համար կարելի լինէր թեմի այլ մասերին դիմել:

Նոյն խոկ Խուսիայի պէս մի համեմատապէս առաջացած երկրում միջնակարդ դպրոց անկարելի է համարում աշակերպներով ապահովել այն քաղաքներում, որոնք միայն 3.800 բնակիչ ունին, այսինքն այնքան, որքան ունին Թաւրիզի հայկական մասերը:

Ուրիշն, Թաւրիզում և առհասարակ Սորբագրականում ու ամբողջ Պարսկասպանում միջնակարդ դպրոց հիմնելու խնդիրը մենք համարում ենք, երկու շատ կարեոր գեսակետներից, բոլորովին անգործնական, չխօսած արդէն այն հանգամանքի մասին, որ հասարակական խոշոր դրամագլուխների պահպանութեան համար Պարսկասրանի պէս երկրում չկայ ոչ մի լուրջ երաշխաւորութիւն:

Պէտք է նաև դպրոցական խնդրի մէջ ժողովրդի խսկական պէտքերը և դրական հանգստանքները աչքի առաջ ունինալ: Մենք շատ աւելի ուրախ ենք, որ Սորբագրականում զիւղական ազգաբնակութիւնը ճիշլող զերազանցութիւն ունի և ոչ թէ կուրսական է մի-երկու կենտրոնում: հետեւատիս նաև սկզբնականից վեր դպրոցի համար յանցանք է յեկավարւել Թաւրիզի մի բուռն վաճառականների շահերով աշխատով աշխատով անել անել մնացած ամբողջութիւնը: Ակը բնականից վեր Ասրագարականին հարկաւոր են մի կամ զուցէ նաև մի քանի աւելի բարձր դպրոցներ, բայց միայն այնպիսիներ, որոնք կարող լինեն ծառայել ոչ թէ մի բուռն վաճառականների շահերին, այլ զիւղական ազգաբնակութեան: Եւ այդ խնդրին մենք երբ և իցէ կ'վերադառնանք:

Ա. ԱՐԱՄԽԱՆԵՍՆՅ